

ԱՄԵՐԻԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՍՏԵՂԻ ԵՎ ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մարգարիտա Խաչատրյան

Բանասիրական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Գրիգոր Լուսավորչի 15
Էլ. հասցե՝ margarit2011@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 14.09.2021, գրախոսվել է 28.04.2022, ընդունվել է տպագրության 11.04.2023
DOI: 10.53548/0320-8117-2023.1-114

Ներածություն

Սփյուռքի հայ գրականության թեմատիկ որոնումները XX դ. առաջին քառորդին երկու հիմնական խնդրի շուրջ էին ընթանում՝ կորցրած Բնօրրանի հիշատակներ և նոր միջավայրի պատկերման հնարավորությունների փնտրտուք։ Այս դաշտում առանձնանանում է ամերիկյան միջավայրը։ Տասնամյակներ շարունակ եզակի վերաբնակներ Ամերիկայից հասնում էին Էրկիր ու իրենց օրինակով հաճախ գայթակղում հայրենակիցներին՝ ներկայացնելով ամերիկյան միջավայրի անսահմանափակ հնարավորությունները։ Դարասկզբին ամերիկաբնակ հայ գրողները ջանում էին օգտակար լինել Բնօրրանը հարկադրաբար լքած ու փրկության ափ հասած հայությանը, որն անձանոթ էր նոր բնակավայրի օրենքներին, կարգ ու կանոնին։ Այս առումով Համաստեղի (Համբարձում Կելենյան, 1895-1966), Արամ Հայկազի (Չեքեմյան, 1900-1986) և նրանց գրչընկերների գրական երկերն ընդգծված ուսուցողական, նաև ճանաչողական բնույթ ունեն։ Կենցաղային մանր-մունր հարցերից մինչև ժողովուրդների ճակատագրի խնդիրների քննությունը կատարվում է այն ներքին համոզումով, որ կգան նոր ժամանակներ, և օվկիանոսի այս ափին ձեռք բերած փորձն ու կյանքի ճանաչողությունը Հայրենիքում կճառայեն նոր սերունդների դաստիարակության գործին։ Վաղ թե ուշ Բնօրրան վերադառնալու հույսով օվկիանոսն անցած հայ մարդիկ տարիներ շարունակ ապրում էին վերադարձի երազանքով ու դժվարությամբ հարմարվում նոր պայմաններին, նոր իրականությանը։ Ամերիկյան միջավայրում թեմատիկ որոնումները Համաստեղի և Արամ Հայկազի գրականությունը հարստացրին բազմաթիվ հետաքրքիր էջերով, որոնք այսօր էլ արժեքավոր են ոչ միայն որպես գրական-գեղարվեստական իրողություն, այլ նաև հուզիչ են, սրտառուչ ու չեն կորցրել ինքնատիպությունը, ասելիք ունեն ողջ հայությանը։

Ստեղծագործական որոնումներ

Սփյուռքի հայ գրականության երկու նշանավոր դեմքերի՝ Համաստեղի և Արամ Հայկազի գրական ժառանգության մեջ ամերիկյան թեմատիկայի փնտրտուքը քննության շատ հետաքրքիր նյութ է։ Համաստեղը ծնունդով

խարբերոցի էր՝ Բարջանճ¹ գյուղից, 1913-ից ապրում էր Բոստոնում, Արամ Հայկազը շապինգարահիսարցի էր, 1921-ին էր ներգաղթել ԱՄՆ, ապրում էր Նյու Յորքում: Նրանք մտերիմներ, բարեկամներ էին, երկար ժամանակ նաև կուսակցական ընկերներ՝ ՀՅԴ անդամ:

Որոշիչ և կարևոր էր այն հանգամանքը, որ Ամերիկայում ապրող այս հայ գրողների ստեղծագործական ազդակները Բնօրրանից էին գալիս: Համաստեղը և Արամ Հայկազը մշակում էին իրենց պարտեզները, ծաղիկներ ու բանջարեղեն աճեցնում, իսկ միմյանց հասցեագրած նամակներում² հպարտությամբ պատմում «բերքի» մասին, նկարագրում գունագեղ ծաղկանոցը: Նկարագրություններում երբեմն առկա են մոտեցող աշնան հետ կապված ցավի զգացումը և անխուսափելի ձմռան նկատմամբ վախը: Այդ պարտեզները հիշեցնում էին հայրենի արտերն ու այգիները:

Ամերիկյան իրականության պատկերման փորձեր սփյուռքահայ գրականության մեջ

Ամերիկյան իրականության շատ հետաքրքիր անդրադարձ է Վահան Թորթվենցի (Թորթվայենց, 1893-1938) «Ամերիկա» պատմվածքների ժողովածուն (Երևան, 1929): Դա հեռվից հեքիաթային կախարդանքով հմայող («Ինչպես ծովում խեղդեցի մի մարդու»), բայց իրականում անխնա հարստահարման, մարդու մեջ մարդկայինն ու ազգայինը սպանող միջավայր է («Հայրենակից», «Արաբական բալլադա»): Աշխարհի հարստության զգալի մասն ամբարած Ամերիկա երկրի հոգևոր սնանկության պատկերը լրացնում է սոսկ գրքերի շքեղ կազմերից կազմված գրադարանը («Աստվածային կատակերգություն»): «Սարսափելի, ահարկու»³ քաղաքների այս երկրում, որտեղ գործնականությունը առաքինություն է հռչակված, Թորթվենցը մարդկանց փոխարեն տեսնում է «դեկորացիա»⁴:

Համաստեղը և Արամ Հայկազն ավելի զգուշավոր ու մեղմ են այս հարցում. Համաստեղը գրեթե չի անդրադառնում սոցիալական խնդիրների, իսկ Արամ Հայկազը, որի պատանեկան տարիների հուշերում «ապրում էին» նաև այլազգի աղջիկների, կանանց, տղաների ու տղամարդկանց, պապիկների ու տատիկների մարդկային անմոռանալի կերպարները: Նա փորձում է ազգերի այդ խառնարանում հայի համար անվտանգ անկյուն գտնել:

Բենիամին Նուրիկյանը (1894-1988) ամերիկաբնակ իր հերոսներին անվանում է «Պանդուխտ հոգիներ» (Երևան, 1958): Տարբեր ազգերի աշխատավոր մարդկանց համար Ամերիկան աշխատանքի և ոսկու հակադրության աշխարհ է («Մարդիկ, հասարակ մարդիկ», «Մայրը», «Ուրբաթ առտու»): Հայ պանդուխտները, որոնք հեռավոր այս երկրի «վրա աղվոր երազներ» էին տեսնում («Դևին օրորոցը»), փորձում են ապրել «հայրենի գեղը ծվարած

¹ Տե՛ս Բարջանճ գիրք: Համայնապատում (1600-1937) 1938, 73-76:

² Համաստեղ 2003, 218-227, Արամ Հայկազ 2009, 93-104:

³ Թորթվենց 1929, 18:

⁴ Թորթվենց 1929, 91:

սրտին մեջ» («Կաթիլ մը յուղ Ս. Մեսրոպեն»), անաղարտ պահել... գոնե անուն-ազգանունը («Մեռելները կը հաղթեն»), բայց ստիպված են կրել աղավաղված անուններ ու ազգանուններ: Ամենահրեշավորը չարքաշ աշխատավորի վիճակն է ծերանալուց հետո («Մաշած ավել»): փաստորեն, այս երկրում է ապրում այն սարսափելի հրեշը, որի մասին հեքիաթը գյուղում պատմում էին երեխաներին:

Բ. Նուրիկյանի հայ հերոսների մտապատկերում կա՛, ապրում է Բնօրրանի հիշողությունը, քանի որ «Մեռելները ողջերուն կիշխեն, մեռելները կհաղթեն»⁵:

Վահե Հայկը (Տինճյան, 1896-1983) «Հայրենի ծխան» է վերնագրում պատմվածքների ժողովածուների հինգհատորյակը, որի մի գիրքը 1960-ին լույս է տեսել Երևանում: Նա պատկերում է ամերիկաբնակ հայության երկու շերտի՝ և՛ «դրամի իշխաններին», որոնք հմուտ են «շուկայի քերականության»⁶ ասպարեզում, բայց պարզապես «համբավված զգվելի»⁷ մարդիկ են, և՛ անհոգի միջավայրի զոհերին, որոնք չեն ենթարկվում այս երկրում «նոր աստված» հռչակված դրամի թելադրած կանոններին («Վերը Աստված կա, Կարապետ», «Մամիկ ու թոռնիկ»): Այս ամենի տխուր հետևանքն այն է, որ ասպետական վարքագծի տակ հմտորեն թաքնվում են գիշատիչ կրքեր («Հոգվոցն հանգուցելոց», «Աստ հանգչի»):

Ողբերգական սյուժեներով են հյուսված «Կաթիլ փարան չմոռնաս» և «Հայր» պատմվածքները:

«Ռազմիկ շունի մը հետ» պատմվածքի հերոսը հայ այգեպանի երեխաների հետ մեծացած Քինգն է: Աշխարհավեր պատերազմից այս շունը վերադարձել է գազանացած. «մարդը մարդ ըլլար»⁸ սիրուն երազանքի համար կռվի դաշտ գնացած կենդանու համար այլևս անիրագործելի է «նոր ու պայծառ առավոտի մը ծագումը» երկրի վրա⁹:

Վ. Հայկի տարագիր հերոսների կյանքի փարոսը Խորհրդային Հայաստանն է («Երկու մայր, մեկ զավակ»), և կենդանի է հույսը՝ զավակներն ավելի լավ կապրեն:

Վազգեն Շուշանյանի (1903-1941) «Երկիր հիշատակաց» ժողովածուն 1960-ին լույս է տեսել Երևանում: Վ. Շուշանյանի հերոսն անբաժան է հայրենի հիշատակներից, թեպետ հիմա «Օրերը գեղեցիկ չեն», բայց համառորեն ապրում է կորցրածը վերագտնելու հույսով ու երազով: «Ո՞վ եմ ես» հարցի պատասխանի փնտրտուքը հային մտովի տանում է Բնօրրան, ու ծնվում է համոզումը. «Վաղը կպատկանի մեզի: Այսքան սրիկայութենե, գոեհկութենե, հա-

⁵ Նուրիկյան 1958, 190:

⁶ Հայկ 1960, 46:

⁷ Հայկ 1960, 44:

⁸ Հայկ 1960, 291:

⁹ Հայկ 1960, 291:

սարակ ու սովորական հաճույքի օրերե հետո մաքրության առավոտ մը պիտի բացվի վրանիս»¹⁰:

Կա՛, ապրում է Հույսը, ուրեմն կա՛ նաեւ փրկություն ոչ միայն տարագիր հայի, այլև ողջ մարդկության համար: Սա Վ. Շուշանյան հայ մարդու և գրողի գրական կտակն է հայության սերունդներին, որոնց պետք է փոխանցել ոչ միայն կորստի ցավը, այլև ապագայի հույսը:

Մարդու և գրողի ճակատագիրը

Ամերիկյան իրականությունը, որպես գրական նյութ, շատ հետաքրքիր էր, բայց Համաստեղի ու Արամ Հայկազի՝ մարդկանց և գրողների համեմատության եզրերը, չափանիշները ձևավորվել էին այլ միջավայրում՝ Բնօրրանում: Ներկան հասկանալու, բացահայտելու գեղարվեստական փորձերում անխուսափելիորեն զգացվում է ցավոտ անցյալը. չմոռանանք, որ 1915-ի ոճրագործությունները, դրանց նախորդող և հաջորդող կոտորածները, այն է՝ ցեղասպանությունը, կատարվել է քաղաքակիրթ աշխարհի աչքի առջև:

Այդ ոճիրը նաև անձնական, կենսական ապրում է, որն անբաժան է հայության փրկված հատվածից: Այսպես, Կելենյան ընտանիքը 1915-ին զոհ է տվել երկու զավակ, իսկ 15-ամյա Արամը հայրենակիցների հետ բարձրացել է Շապին Գարահիսարի Բերդը, մասնակցել ծննդավայրի հերոսական մաքառմանը և փրկված հայրենակիցների փոքրիկ քարավանի հետ վիրավոր ուղքով քայլել է հայակույ ճամփաներով՝ մոր ձեռքը բռնած: Չեքեմյան տոհմի վերջին շառավիղը՝ Արամը, հարկադրաբար ուրացավ ծննդավայրն ու կրոնը և որպես Մյուսլիմ՝ չորս տարի ապրեց Քյուրդիստանի լեռներում: Արամի մայրը՝ տիկին Յուլաբերը, կույզնաց Եփրատի ալիքներին...

Թուրքը գնդակահարեց Արամի Հայկազ (1898-1915) եղբորը, և նա առաջին գրական փորձերից սկսած՝ ստորագրում էր՝ *Արամ Հայկազ*: Սա մարդու ճակատագիր է: Սա հայի ճակատագիր է: Սա դրվագ է ոչ հեռու անցյալում կատարված ոճրագործության պատմությունից:

Երբ Համաստեղն ու Արամ Հայկազը պատմում են ապրած օրերի, մտորումների, ճակատագրերի մասին, չեն կարողանում բաժանվել անցյալից. նրանք փնտրում են մարդուն Մարդ պահող այն հոգևոր արմատները, որոնք Բնօրրանում սնվում են Հողից: Այստեղ՝ բարոյական չափանիշներով, հոգեբանական արմատներով խորթ, հայության հոգսերից ու ազգային մտահոգություններից գրեթե անտեղյակ երկրում՝ բոլորի՝ երկրում, գործում են անհասկանալի, երբեմն հայի համար անընդունելի օրենքներ, որոնք շատ հեռու են հոգևորից: Համաստեղի և Արամի Հայկազի հերոսները գոյատևում են այս միջավայրում՝ աշխատելով չհարանալ ու ամենակարևորը՝ չկորցնել Հայրենիք վերադառնալու հույսը:

Նաև այս արմատներից է սնվում Համաստեղի ու Արամ Հայկազի՝ Հայաստան աշխարհի փրկված հատվածի՝ Խորհրդային Հայաստանի նկատ-

¹⁰ Շուշանյան 1966, 47:

մամբ խոնարհման հասնող Սերը: Նրանք այդ Սիրուց բաժին են հանում աշխարհի բոլոր մարդկանց՝ փայփայելով իր Բնօրրանում արարող Հայի իդեալը, որը նաև Մարդու արարող տեսակի իդեալն է: Այս ամենը մի բառով կոչվում է Հավատ, այսինքն՝ մարդու արարող տեսակի կենդանի կապը գյուղաշխարհի, նախնիների հետ, առանց որի հնարավոր չէ դիմադրել մարդակերպ ավարառու, արյունոտ լեզուներին:

Համաստեղի «Թափառաշրջիկի մը օրագրէն», «Չամչով կարկանդակը», «Լուքաս աղբարը և աղավին», «Տուցատախտակը», «Ձոհը Կար ամուն էր», «Վարդան», «Սպասում», «Պուարիկը», պատմվածքների, «Հայաստանի լեռներու սրնգահարը» երաժշտական դրամայի, «Անսովոր կինը»¹¹ վիպակի, «Հայրս»¹², «Հրեայ բարեկամս»¹³, «Թոնին և Հալլէի գիսատորը»¹⁴, «Էնը»¹⁵, «Սքիփին»¹⁶, «Քրիստոսի երկրորդ գալուստը»¹⁷ դրամատիկական ստեղծագործության, ինչպես նաև «Սպիտակ լեռներուն մէջ», «Նիւ Եորքի մէջ» և «Վերադարձ»¹⁸ հատվածների (սրանք գրողի՝ վիպակ գրելու առաջին փորձի պահպանված մասերն են) գործողությունների վայրը ամերիկյան միջավայրն է:

Վերը թվարկված ստեղծագործություններն արտացոլում են արարման և ուժի իրավունքի առաջ խոնարհվելու ներքին հակամարտության ամենօրյա դրսևորումները, որոնք կյանքը դարձնում են դժոխային տառապանք: Քանի դեռ արարման կոչված մարդը չի վերանայել ուժի իրավունքով հիմնավորված չափանիշները ու չի կողմնորոշվել հոգևոր արժեքներով, աշխարհում ոչինչ չի փոխվի:

Համաստեղի՝ Ամերիկայում ապրող հայ հերոսները շրջապատողների համար պարզապես անհաջողակներ են. նրանց նոր միջավայրում գրեթե ոչինչ չի հետաքրքրում, իսկ կյանքը սոսկ անիմաստ ու չարքաշ գոյություն է: Բնօրրանից օվկիանոսով բաժանված երկրում հայտնված հայը դեռ ապրում է հողի կարոտով, հողի կանչով: Համաստեղը չի ընդունում «ամերիկահայ» որակումը. նրա գրականության հերոսը ամենատարբեր իրավիճակներում հայտնված հայն է, որն ապրում է, ավելի ճիշտ՝ գոյատևում է Ամերիկայում: Գրողը իր հերոսներին դիտարկում է համամարդկային արժեքների չափանիշներով և չի կտրվում հայրենի հողի կենդանի ու ոգեշնչող հիշատակներից:

«Վարդան» և «Երանոս աղբար»¹⁹ պատմվածքների հերոսներն ապրում են օտար միջավայրում: «Վարդան» պատմվածքում հայը և հայկականն ամ-

¹¹ Այս տասը ստեղծագործությունները տե՛ս Համաստեղ 1989, 236-244, 205-212, 425-442, 485-513, 124-128, 76-124, 442-457, 281-295, 641-694, 457-484:

¹² Հայրենիք 1939, N 2: «Քաջն Նազար եւ 13 պատմութեան» գրքում (Կահիրե, 1955) պատմվածքը վերնագրված է «Փոքրիկ աղջկայ մը յուշերէն»:

¹³ Համաստեղ 2005, հ. Գ, 63-69:

¹⁴ Համաստեղ 2005, հ. Ա, 72-83:

¹⁵ Համաստեղ 2005, հ. Բ, 9-11:

¹⁶ Համաստեղ 2005, հ. Գ, 74-76:

¹⁷ Համաստեղ 2005, հ. Ա, 194-261:

¹⁸ Համաստեղ 2005, հ. Ա, 102-192:

¹⁹ Համաստեղ 1989, 70-124, 378-404:

բողջական նկարագիր չունեն, մինչդեռ «Երանոս աղբար»-ում ընդգծված են կարոտի երանգները, Բնօրրան վերադառնալու հույսը: Վարդանը խեղճ է, մենակ ու լքված, իսկ Երանոսի հպարտ մենակությունը շնչում, ապրում է Հողի բույրերով ու Երկրի ծայներով, որոնցից հոգևոր ուժ է բխում: Նկարագրելով Վարդանի կյանքից մի քանի դրվագ՝ գրողը երգիծական մեկ-երկու վրձնահարվածով ամբողջացնում է պատկերը:

Երանոսի կրած տանջանքները բավարար են նրան դրախտ տանելու, բայց ոչ երջանկացնելու համար. Երանոսը երկնքում «ավելի տխրեցավ»²⁰:

Անցյալի հիշատակներով է ապրում նաեւ օտար աշխարհի մյուս զոհը՝ Կար ամուն («Ձոհը Կար ամուն էր»): Այս գյուղացու համար երազի պես անիրական դարձած գյուղը գոյատևելու միակ պայմանն է, ու նա ամեն վայրկյան մտովի այնտեղ է... Այդ օրն էլ նա սրտի ցավով արթնացել էր, բռնել գործաբանի ճամփան, բայց մտովի կրկին գյուղում էր...

«Մեքենաները դանդաղեցան, գործավորներն իրար անցան ու գտան մարմնի կտորներ անիվներու փաթեված...

Ձոհը Կար ամուն էր»²¹, – սա ողբերգության վերջին պատկերն է...

Համաստեղի «Հայաստանի լեռներու սրնգահարը» երաժշտական դրամայի հերոսներն ամերիկաբնակ են, բայց լսում են գյուղի հովվի սրինգի մեղեդին. «Երկիրը, Ամերիկա շատ անգամ իրար կխառնվին»²²: «Ե՞րբ պիտի արթնանք, ա՛խ, ե՞րբ պիտի արթնանք»²³, – հարցնում է դրամայի հերոսուհին:

Համաստեղը պատասխանում է՝ երբե՛ք:

Գրողը համառորեն երազող իր հերոսներին մտովի վերադարձնում է Բնօրրան. հայի համար ուրիշ պարզև չկա: Համաստեղի այս ստեղծագործությունն աղերսներ ունի Վիլյամ Սարոյանի (1908-1981) «Իմ սիրտը լեռներում է» (1963) պիեսի հետ: Հայրենի լեռներում Այծեմարդը պարում է Լալազարի հետ: Պիեսի հերոսները օտար հողի վրա փաստորեն ստեղծել են իրենց փոքրիկ Հայրենիքը՝ Գյուղը, որտեղ ապրում են գրողի ծանոթ հերոսները: Ի դեպ, այս ստեղծագործության մեջ նա ներկայացրել է նաև հորը՝ սափրիչ Օհանին: «Բարջանճ գիւղ» գրքում կարդում ենք, որ «պէրպէր Օվանէսը» ճանաչված էր իբրև լավ սափրիչ ու «կարող բժիշկ»²⁴: Դրամայի հերոսները հիշում են Օհանին. «Խրխճի Նիկողոսը կամ սափրիչ Օհանը էս տեղի տոքթորները ծովը կտանէին, ծարավ կբերէին»²⁵: Դրամայի հերոսները մտովի տեսնում են նաև ջրաղացպան Նավոյին, նրա ջրաղացն ու կիսապատին թառած նախշուն աքաղաղին: Չալոն էլ է այստեղ. գյուղի նկարագիրը լրիվ է:

Գրողը պարզևատրում է իր հերոսներին՝ նրանց մտովի տանելով Բնօրրան:

²⁰ Համաստեղ 1989, 404:

²¹ Համաստեղ 1989, 128:

²² Համաստեղ 1989, 691:

²³ Համաստեղ 1989, 692:

²⁴ Բարջանճ գյուղ: Համայնապատում (1600-1937) 1938, 74:

²⁵ Բարջանճ գյուղ: Համայնապատում (1600-1937) 1938, 676:

«Քրիստոսի երկրորդ գալուստը» դրամատիկական ստեղծագործության մեջ Համաստեղի ուշադրության կենտրոնում անհոգի աշխարհի և մարդու հոգու երկնային թռիչքների հակադրությունն է: Ամերիկյան իրականության նկարագիրն ամբողջացնում է «ամերիկեան դիցազներգությունը». թերթերը գրում են քաղաքապետի աղքատ շնիկի մասին՝ ուշադրություն անգամ չդարձնելով երկրում կատարվող դեպքերին, որոնք անհասկանալի են, սարսափելի, թեև ծանոթ են Աստվածաշնչից: Մարդը, աշխարհը ոչինչ չեն սովորել անցած հազարամյակների ընթացքում... Գրողին հետաքրքրում է ոչ թե հերոսների ազգային պատկանելությունը, այլ աշխարհի, մարդկանց նկատմամբ վերաբերմունքը: Բարոյականի և ոչ բարոյականի հակադրության մեջ նա առավելությունը տալիս է երազով, հեքիաթով ապրող մարդկանց, որոնք հեռու են շահի ու հաշվենկատության համընդհանուր վարակից:

Համաստեղի գրականությունը հայի, հայության հոգևոր գոյության վերժամանակյա և տարածությունից դուրս մի աշխարհ է՝ իրական մարդկանցով ու դեպքերով, ավանդականը պահելու գերմարդկային ջանքերով, որ գործադրում են գրողի՝ աշխարհասփյուռ հերոսները: Նրա հերոսը հայ մարդն է, որն արմատներով արևելյի է, դժվարությամբ է համակերպվում արևմտյան իրականությանն ու «արժեքներին»:

Համաստեղը սփյուռքահայության բնակության վայր դարձած աշխարհի օրենքների քննությամբ նպատակ ունի պաշտպանել Մարդուն դաժան, բարոյական չափանիշներից միայն ճամարտակող աշխարհից, անկախ ազգային պատկանելությունից: Այլ խոսքով՝ աշխարհը գրողին հետաքրքրում է միայն որպես վայր, որտեղ հայը հարկադրված է գոյատևել, մինչև Բնօրրան վերադառնալը: Երագից մինչև հայրենի հող վերադառնալու ճանապարհին գերխնդիրը ազգային նկարագիրն անխաթար պահելն է, մանավանդ որ այդ աշխարհում էլ քիչ չեն տիեզերական բարության օրենքներով ապրող անհատները:

Արամ Հայկազն ամերիկյան իրականությունը պատկերող պատմվածքները տարբեր ժողովածուներում ներկայացնում է այսպես՝ «Յեղին ծայնը» (հ. 2, 1954 թ.) գրքում՝ «Մեր դրացիները», «Չորս աշխարհ» (1962 թ.) գրքում՝ «Ամերիկա («Մենք ու մեր դրացիները)», «Պանդոկ»-ում (1967 թ.)՝ «Մեր գիւղը և մեր դրացիները» խորագրերի տակ: Նա Նյու Յորքից «հագի վեց-եօթը մղոն հեռու» գտնվող Քուինզ թաղամասը կոչում է «Մեր գյուղը», բայց դա ո՛չ Համաստեղի Գյուղն է, ո՛չ էլ Հակոբ Մնձուրու (Տեմիրճյան, 1896-1978) Արմտանը, այլ աշխարհի չորս ծագերից այս հողում ծվարած այլալեզու մարդկանց բնակավայրը՝ գյուղ բոլորի՝ համար, բոլորի՝ գյուղը:

Արամ Հայկազի ամերիկաբնակ հերոսներն ու հերոսուհիները փորձում են հարմարվել նոր պայմաններին, նոր պահանջներին, բայց «սև տարվա» հիշողությունները կան, ապրում են, ու ծնվում է գրողի այս խորախորհուրդ վճռակր. «Չէ՞ որ հայ ըլլալը ցաւ ունենալ կը նշանակէր»²⁶: Ճիշտ է, հայրենաբաղձությունը սոսկ «հայկական հիւանդութիւն» չէ, և գրողն այդ աշխարհը

²⁶ Հայկազ 2022, 364:

բնորոշում է իր գրքերից մեկի վերնագրով՝ «Պանդոկ» (Բեյրութ, 1967), որտեղ ապրում և տառապում են բոլոր ազգերի ներկայացուցիչները, որոնց առօրյա կենցաղային հոգսերից, ազգային ու մարդկային նկարագիրը պահելու հուսահատ ճիգերից ծնվում են սյուժետային հետաքրքիր գծեր:

Անմոռանալի է «Կարօտ» ժողովածուի «Հապը», «Սողոմ-Գոմոր» պատմվածքների հերոսուհի տիկին Մաքրուհին: Նա հերոսական ճիգերով փորձում է դաստիարակել թոռներին, խրատել ու բացատրել իրեն հասկանալի և ընդունելի ճշմարտություններ, բայց միշտ հայտնվում է բախումների խաչմերուկում և հարևանի՝ Արամի հետ ստեղծված իրավիճակից լուծումներ է փնտրում: Արամ Հայկազի «Մոռացված էջեր» գրքի Դ հատորում (Երևան, 2013) տեղ գտած «Տրամախօսութիւն կնոջ մը և այր մարդու մը միջև» (էջ 90-93), «Տրամախօսութիւն տիկին Մաքրուհիի հետ» (էջ 212-215) և «Տեսակցութիւն» (էջ 215-218) պատմվածքների հերոսուհին հայրենակարոտ այս տատիկն է:

Գրողն այդ ամենին նայում է կյանքի և մահվան խորհուրդը հասկացած հայի աչքերով, որի համար աշխարհի ամենահեքիաթային հաճույքն անգամ թունավորված է ոչ միայն անցյալում կրած անլուր տառապանքով, այլև մարդու և մարդկության անհուսալի հեռանկարով. մարդկությունը քար լռությամբ հաստատում է ոճրի և ոճրագործության հնարավորությունն աշխարհի ինչ-որ անկյունում՝ ինչ անուն էլ այն կրի: Այս գիտակցությունը պարզապես թունավորում է տառապանքով իմաստնացած հայի կյանքը:

Հայկազի հերոսը մտածում է, որ աշխարհը «Հայութեան Հուդան դարձավ», և չի ուզում մահից հետո թաղվել այն հողում, որն Ավետարանից հայտնի «Բրուտի արտ» անունով կարելի է կոչել: Ներքին դժգոհությունն աշխարհից և մարդուց, նրանց լավ ու բարի տեսնելու ցանկությունը հային միավորում են աշխարհին ու մարդկությանը, բայց արյան կանչը, երակներում տրոփող ցավն անբաժան են նրանից: Ապրել է պետք, և հայն ապրում է երկրային ուրախություններով, բայց հոգու խորքում անթեղված կրակի պես ծխում է Կարոտը: Պարտեզի անկյունում ծլարձակած տասնչորս հասկերը գրողի աչքերի առաջ դառնում են «արևուն տակ ծփացող ոսկի արտեր», և նա մտովի տեսնում է հունձ անող համազրուղացիներին...

Արամ Հայկազի գրականությանը բնորոշ բարեհոգի հումորի մթնոլորտում առանձնանում են այն պատկերները, որոնց հերոսներն ամերիկաբնակ հայերի առաջին սերնդի մարդիկ են. որոնք ոչինչ չեն մոռացել և չեն էլ կարող մոռանալ, որովհետև չեն ուզում, որ ջարդը, ավարառությունը, իրենց ապրած ողբերգությունը կրկնվեն աշխարհում:

Եզրակացություններ

Համաստեղի և Արամ Հայկազի պատմվածքներում ամերիկյան միջավայրն ընդհանրացած է՝ աշխարհ, որը մարդուն տրված է արարման համար, բայց պարբերաբար դառնում է պատերազմի թատերաբեմ:

Համաստեղն ու Արամ Հայկազը սերունդներին թողել են գրական հարուստ ժառանգություն, որը հայ ժողովրդի «ապրելու հզոր տենչանքի» հաս-

տատումն է: Նրանք սիրում ու լավ են հասկանում օտար աշխարհների օրենքներով գոյատևող իրենց հերոսներին, պատկերում նրանց հոգեբանության այն ծալքերը, որոնք արմատներով անցյալի մեջ են:

Նրանց գրական ճանապարհը Բնօրրանից է սկսվում, անցնում օտար քաղաքի փողոցներով, հասնում Երկնքին և վերադառնում ակունքներին՝ հայրենի Հողին: Սա հայի թափառիկ ճակատագրի թելադրանքն է. Հայաստանի լեռների սրնգահարի երգը հնչում է Հայրենիքում ու կանչում իր զավակներին: Սա Համաստեղի և Արամ Հայկազի գրականության կոչն է հայության բոլոր սերունդներին:

Հազարավոր հայեր, որ ապրում են «Ամերիկա» կոչված (կամ աշխարհի որևէ) վայրում, չեն կորցրել երագով ապրելու ունակությունը, որը քչերին է տրվում, բայց մարդկության գոյության ամենակարևոր պայմաններից է, եթե չենք ուզում համատարած մեքենայացման շրջապտույտի մեջ անվերադարձ կորցնել Մարդու՝ աստվածային ծագման, աստվածային էության իդեալը, - եզրակացնում է ընթերցողը Համաստեղի և Արամ Հայկազի՝ ամերիկյան իրականությունը պատկերող ստեղծագործությունները կարդալով:

Համաստեղն ու Արամ Հայկազն աշխարհին նայում են կյանքի ու մահվան խորհուրդը հասկացած հայի աչքերով: Նրանք ցանկանում են, որ մարդկությունն ապրի «աղվոր ու բարի» աշխարհում, այդուհանդերձ, նրանցից անբաժան են Բնօրրանի կարոտն ու հոգու ցավը:

Գրականություն

Բարջանճ գիւղ: Համայնապատում (1600-1937) 1938, կազմեց Մանուկ Պ. Ծերոն, Բոստոն, «Պայքար», 280 էջ:

Թոթովենց Վ. 1929, Ամերիկա, Երևան, «Պետհրատ», 142 էջ:

Համաստեղ 1989, Հայաստանի լեռներու սրնգահարը, Երևան, «Խորհրդային գրող», 704 էջ:

Համաստեղ 2003, Նամականի, բնագիրը, ծանոթագրությունները և առաջաբանը Մարգարիտա Խաչատրյանի, Երևան, «Մուղնի», 503 էջ:

Համաստեղ. Մոռացված էջեր 2005, բնագիրը, ծանոթագրությունները և առաջաբանը Մարգարիտա Խաչատրյանի, Կ. Ա. Երևան, «Հայկական հանրագիտարան», 320 էջ:

Հայկ Վ. 1960, Հայրենի ծխան, Երևան, «Հայպետհրատ», 338 էջ:

Հայկազ Ա. 1954, Ցեղին ծայնը (Ի. 2), Բեյրութ, Հայ Կաթողիկէ տպարան, էջ 315:

Հայկազ Ա. 1962, Չորս աշխարհ, Նյու Յորք, «Մշակ», 416 էջ:

Հայկազ Ա. 1967, Պանդոկ, Նյու Յորք, «Մշակ», 274 էջ:

Հայկազ Ա. 1971, Կարօտ, Բեյրութ, «Մշակ», 335 էջ:

Հայկազ Ա. Մոռացված էջեր 2013, բնագիրը, ծանոթագրությունները և ներածությունը Մարգարիտա Խաչատրյանի, Կ. Դ. Երևան, «Տիգրան Մեծ», 320 էջ:

Հայկազ Ա. 2009, Նամակներ, բնագիրը, ծանոթագրությունները և առաջաբանը Մարգարիտա Խաչատրյանի, Երևան, «Տիգրան Մեծ», 319 էջ:

Հայկազ Ա. 2022, Չորս տարի Քիւրտիստանի լեռներուն մէջ, բնագիրը, ծանոթագրությունները և վերջաբանը Մարգարիտա Խաչատրյանի, Երևան, «Հայաստան», 608 էջ:

Հայրենիք, ամսագիր 1939, N 2, Բոստոն:

Նուրիկյան Բ. 1958, Պանդոկստ հոգիներ, Երևան, «Հայպետհրատ», 229 էջ:

Շուշանյան Վ. 1960, Երկիր հիշատակաց, Երևան, «Հայաստան», 424 էջ:

ԱՄԵՐԻԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՍՏԵՂԻ ԵՎ ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մարգարիտա Խաչատրյան

Ամփոփում

Ամերիկյան իրականությունը պատկերելիս Համաստեղը և Արամ Հայկազը իրենց ստեղծագործություններում ներկայացնում են նաև հերոսների ողբերգական անցյալը: Նրանց հոգեհարազատ են օտար աշխարհների օրենքներով գոյատևող այդ հերոսները:

Համաստեղի և Արամ Հայկազի պատմվածքներում ամերիկյան միջավայրն արտացոլում է այն աշխարհի ընդհանրացված պատկերը, որտեղ գործում են հայի համար երբեմն անընդունելի, բարոյական չափանիշներով խորթ օրենքներ:

Սփյուռքահայ այս տաղանդավոր գրողները սերունդներին թողել են գրական հարուստ ժառանգություն, որն արտացոլում է ամերիկյան իրականության ճշգրիտ պատկերը: Նրանց ստեղծված կերպարներն ապրում են հայրենիքի հիշողություններով և, ավանդականը պահելու գերագույն ճիգերով, փորձում են հարմարվել նոր պայմաններին, նոր իրականությանը:

Բանալի բառեր՝ Սփյուռքի հայ գրականություն, ամերիկյան իրականություն, ստեղծագործական ազդակներ, հոգևոր սնանկության պատկեր, Բնօրրանի հիշողություն, ողբերգական պատկերներ, անմոռանալի հերոսներ:

АМЕРИКАНСКАЯ ДЕЙСТВИТЕЛЬНОСТЬ В ПРОИЗВЕДЕНИЯХ АМАСТЕГА И АРАМА АЙКАЗА

Маргарита Хачатрян

Резюме

Трагическое прошлое неизбежно присутствует в произведениях Амастега и Арама Айказ, изображающих американскую действительность. В галерее их героев непременно есть персонажи, пережившие ужасы геноцида и депортации. Амастегу и Араму Айказу близки их герои, живущие на чужбине по законам этой среды, часто противоречащим армянской ментальности с присущими ей нравственными постулатами.

Амастег и Арам Айказ оставили поколениям богатое литературное наследие, отражающее истинный образ американской действительности.

Ключевые слова – армянская литература диаспоры, американская действительность, творческие импульсы, образ духовной нищеты, воспоминания о Родине, трагические образы, незабываемые персонажи.

THE AMERICAN REALITY IN THE WRITINGS OF HAMASTEGH AND ARAM HAYKAZ

Margarita Khachatryan

Abstract

The painful past is inevitably present in the literary attempts of Hamastegh and Aram Haykaz to depict American reality. Two children of the Kelenyan family became victims in 1915, and 15-year-old Aram from Shapingarahisar took part in the heroic struggle in his homeland and, together with a small caravan of rescued compatriots, he walked with a wounded leg, holding his mother's hand, along the roads devouring Armenians.

Hamastegh and Aram Haykaz love and understand well their characters who live by the laws of foreign worlds. In their works, the American environment is the generalized world that is given to a man to create, but which, for some reasons, regularly becomes a scene of wars.

Hamastegh and Aram Haykaz have left a rich literary heritage for generations, which is the confirmation of the "powerful desire of the Armenian people to live".

Key words – Armenian literature of the Diaspora, the American reality, creative impulses, image of spiritual decline, memory of the Birthplace, tragic images, unforgettable characters.